

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. ապրիլի 21-ի նիստի /արձանագրություն N 7/

1. Հանձնարարել պրոռեկտորներ Հ. Մինասյանին, Հ. Ավագյանին, գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին և իրավախորհրդատու Է. Մանասերյանին ուսումնասիրել ՀՀ բուհերի վրա ավելացված արժեքի հարկ կիրառելու նախագծի վերաբերյալ ԵՊՀ –ի կազմած փաստաթղթի բովանդակությունը, ավելացնել մեր դիտարկումները և ներկայացնել ԵՊՀ՝ ՀՀ բուհերի ռեկտորների կողմից միասնական պլատֆորմով ՀՀ կառավարության նիստում հարց բարձրացնելու նպատակով:

2. Հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին, Վ. Ավանեսյանին և Է. Մանասերյանին դրամաշնորհի գործընթացում ծագած խնդիրների պարզաբանման և լուծման ուղիներ գտնելու նպատակով այցելել ԾԻԳ, ԾԻԳ-ի ղեկավարության հետ ճշտել հետագա անելիքները և արդյունքների մասին զեկուցել ռեկտորին,

2.1 Ծաղկաձորում կայացած գիտաժողովի նյութերի խմբագրման աշխատանքները հանձնարարել Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Լաուրա Մուրադյանին: Վերջնաժամկետ սահմանել ապրիլի 27-ը:

3. ԵԹԿՊԻ-ի առաջին եռամսյակի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

4. Առաջարկել ինստիտուտի ռեկտորին սահմանված կարգով հրահանգել սկսելու «Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության» և «Խորեոգրաֆիայի» ամբիոնների վարիչների ընտրության գործընթացը,

4.1 հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանի ընտրությունը հետաձգել,

4.2 հանձնարարել գիտական քարտուղարին գործող կարգի համաձայն կազմակերպել՝ «Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության» և «Խորեոգրաֆիայի» ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների տեղակալման գործընթացը:

5. ԵԹԿՊԻ-ի 2014-2015 ուս. տարվա ավարտական քննաշրջանի կազմակերպման ընթացքը համարել բավարար, հետագա վերահսկողությունը հանձնարարել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանին,

5.1 ԵԹԿՊԻ-ի 2015-2016 ուս. տարվա ընդունելության գործընթացը և դիմորդների փաստաթղթերի ընդունելությունը կազմակերպելու համար հատկացնել 112 սենյակը:

6. Հեռակա ուսուցմամբ «Ռեժիսուրա» մասնագիտության լիցենզավորման գործընթացի նախապատրաստման և համակարգման աշխատանքները հանձնարարել Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի վարիչ Ռ. Բաբայանին, հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Եղիազարյանին և գիտքարտուղար Գ. Հովհաննիսյանին:

7. Հանձնարարել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն. Սարգսյանին, դեկան Ա. Հարությունյանին ԵԹԿՊԻ-ի ուսումնական հաշվարկի նորմերում փոփոխություն կատարելու հարցը քննարկել ինստիտուտի մեթոդիսորհրդում, լրամշակել և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան